ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Մեղրի համայնք, Զորավար Անդրանիկ 2
Հեռ.՝ (0286) 4 34 23, էլ-հասցե՝ meghri.syuniq@mta.gov.am

20.10.2016թ.

N21

Հայաստանի Հանրապետության Սյունիքի

մարզպետ Վահե Հակոբյանին

Հարգելի պարոն Հակոբյան,

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 18-ը հոկտեմբերի 2016 թվականի N10-Ա, N11-Ա, N12-Ա, N13-Ա, N14-Ա, N15-Ա, N16-Ա, N17-Ա, N18-Ա, N19-Ա, N20-Ա, N21-Ա, N22-Ա և N23-Ա որոշումները:

Համայնքի ղեկավար՝ *Մ. Զաքարյան*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ No 7979
«25» 10 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2016 թվական N10 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N2 արտահերթ նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի, Ագարակի, Ալվանքի, Լեհվազի, Լիճքի, Կարճևանի, Կուրիսի, Գուդեմնիսի, Նռնաձորի, Վահրավարի, Վարդանիձորի, Տաշտունի, Շվանիձորի համայնքապետարանների աշխատակազմերի գործունեությունը դադարեցնելու մասին:

2.«Ագարակի քաղաքային համայնքի «Գիհոն» կոմունալ բարեկարգման տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու մասին:

4.Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին համայնքում ներդրումային ծրագրեր ներկայացնելու նպատակով նախաձեռնող խումբ ստեղծելու և խմբի անհատական կազմը հաստատելու մասին:

5.«Ագարակ քաղաքի թիվ 1 մ/մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, կանոնադրությունը նոր խմբագրությամբ, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6.«Մեղրի քաղաքի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, կանոնադրությունը նոր խմբագրությամբ, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի 2016 թվականի հոկտեմբերի 12-ի N19-Ա, N20-Ա որոշումները և «Ագարակի մանկապարտեզ»

համայնքային ոչ առևտրային կազմակերպության Կարճևանի մասնաճյուղի, «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Լեհվազի մասնաճյուղի կանոնադրությունները հաստատելու մասին:

8.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի N16-Ա որոշումը, «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

9. «Մեղրու մշակույթի կենտրոն» հիմնարկը լուծարելու մասին:

10. «Մեղրի քաղաքի մայր գրադարան» հիմնարկը լուծարելու մասին:

11. «Մեղրիի քաղաքային մարզադպրոց» հիմնարկը լուծարելու մասին:

12.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նռնաձոր համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 27-ի N30-Ն, N31-Ն և N32-Ն որոշումներն անվավեր ճանաչելու մասին:

13.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր բնակավայրի սեփականություն համարվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին:

Կողմ (9) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2016 թվական N11-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ, ԱԳԱՐԱԿԻ, ԱԼՎԱՆՔԻ, ԼԵՀՎԱԶԻ, ԼԻՃՔԻ, ԿԱՐՃԵՎԱՆԻ, ԿՈՒՐԻՍԻ, ԳՈՒԴԵՄՆԻՍԻ, ՆՌՆԱՁՈՐԻ, ՎԱՀՐԱՎԱՐԻ, ՎԱՐԴԱՆԻՁՈՐԻ, ՏԱՇՏՈՒՆԻ, ՇՎԱՆԻՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի չորրորդ մասի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Դադարեցնել «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ալվանքի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լեհվազի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լիճքի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կարճևանի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կուրիսի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գուդեմնիսի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նռնաձորի համայնքապետարանի աշխատակազմ» «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Վահրավարի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Վարդանիձորի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաշտունի համայնքապետարանի աշխատակազմ» և «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շվանիձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունները:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ս/թ նոյեմբերի 1-ից:

Կողմ (9) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերիի 2016 թվական N12- Ա

«ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԻՀՈՆ» ԿՈՄՈՒՆԱԼ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետով, առաջնորվելով ընկերության կանոնադրությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Լուծարել «Ագարակի քաղաքային համայնքի «Գիհոն» կոմունալ բարեկարգման տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունն (այսուհետ՝ Ընկերություն)՝ առանց իրավահաջորդի:

2.Հաստատել լուծարման հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3.Հաստատել լուծարման հետևյալ կարգը և պայմանները՝

1)Լուծարումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սահմանված կարգով,

2)պարտատերերի պահանջ ներկայացնելու ժամկետ սահմանել երկու ամիս,

3)պարտատերերը պահանջ կարող են ներկայացնել գրավոր ձևակերպված Ընկերության իրավաբանական հասցե առաքված գրությամբ,

4) Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ավարտել Ընկերության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռին:

Կողմ (9)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18

ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016 թ.
հոկտեմբերի 18-ի N12-Ա որոշման

ԿԱԶՄ
«ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԻՀՈՆ» ԿՈՄՈՒՆԱԼ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝
Անդրանիկ Ստեփանյան«Ագարակի քաղաքային համայնքի «Գիհոն» կոմունալ բարեկարգման տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն
Անդամներ՝
ՄիերՂազարյան-Ագարակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
Շուշան Մարգարյան-Ագարակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,
Նելլի Մելքումյան - Ագարակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
Մարգարիտա Թաթևոսյան- Ագարակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2016 թվական N13 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ 9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկել ավագանու հինգ անդամ:
2.Հաստատել հանձնաժողովներում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (9)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ

Դեմ(0)

Ձեռնպահ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016թ. հոկտեմբերի 18 -ի N13-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ադամյան Աշոտ
2. Գևորգյան Խաչատուր
3. Գևորգյան Գագիկ
4. Մարտիրոսյան Կոնստանտ
5. Հայրապետյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2016 թվական N14-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն Մեղրի համայնքին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցության հայտ ներկայացնելու համար:
2.Ստեղծել նախաձեռնող խումբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցության հայտ ներկայացնելու նպատակով:
3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրին մասնակցության հայտ ներկայացնող նախաձեռնող խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
4. Հանձնարարել ՆԽ-ին՝
1)Նախապատրաստել ծրագրի նախնական առաջարկ,
2)Հայտերի նախնական ընտրությունը կատարել ՀՏԶՀ-ի կողմից առաջարկված չափանիշներին համաձայն,
3)Ծրագրի ընտրության և նախապատրաստման ընթացքում մասնակից համայնքների բնակչությանը տրամադրել մանրամասն տեղեկատվություն ծրագրի և նրա նախապատրաստման ընթացքի մասին,
4)Ձեռնարկել միջոցներ՝ ծրագրի նախապատրաստմանը բնակչությանը ներգրավելու համար,
5)Այնպես անել, որ բաղադրիչ ենթածրագրերը՝
ա.ուղղված լինեն մասնակից համայնքների ընդհանուր սոցիալական և տնտեսական խնդիրների լուծմանը,
բ.իրար լրացնեն և ուժեղացնեն:

5.Լիազորել նախաձեռնող խմբի անդամներին՝ Մեղրի համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի բնակչության սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրի առաջարկները ՀՏԶՀ-ին ներկայացնելու համար:

Կողմ (9) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2016թ. հոկտեմբերի 18 -ի N14-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ

1.Զաքարյան Մխիթար- Մեղրի համայնքի ղեկավար
2. Ադամյան Աշոտ – Մեղրի համայնքի ավագանու անդամ
3. Ադամյան Կարեն -Մեղրի համայնքի ավագանու անդամ
4. Ադամյան Հարություն - Մեղրի համայնքի ավագանու անդամ
5. Գևորգյան Գագիկ -Մեղրի համայնքի ավագանու անդամ
6. Գևորգյան Խաչատուր - Մեղրի համայնքի ավագանու անդամ
7. Զաքարյան Հրայր - Մեղրի համայնքի ավագանու անդամ
8. Հակոբյան Գարեգին - Մեղրի համայնքի ավագանու անդամ
9.Հայրապետյան Սուրեն - Մեղրի համայնքի ավագանու անդամ
10. Հովհաննիսյան Հարութ - Մեղրի համայնքի ավագանու անդամ
11. Մարտիրոսյան Կոնստանտ - Մեղրի համայնքի ավագանու անդամ
12. Միքաելյան Սամվել - Մեղրի համայնքի ավագանու անդամ
13. Սամվելյան Արմեն- Ագարակ քաղաքի շահագրգիռ անձ
14. Սարգսյան Վանիկ- Մեղրի քաղաքի շահագրգիռ անձ
15. Ղազարյան Միհեր – Ագարակի համայնքապետարանի գլխավոր մասնագետ
16.Սարգսյան Սոսիկ - «Ագարակի բնակարանային կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն
17. Միրզոյան Կարեն- «ԱԳԱՐԱԿՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն
18. Մարգարյան Շուշան- Ագարակի համայնքապետարանի առաջատար մասնագետ
19. Ադամյան Արփի- Մեղրու պետական քոլեջի դասախոս
20. Մկրտչյան Ռաֆիկ –Լեհվազ գյուղի շահագրգիռ անձ
21. Թումանյան Ալիկ- Շվանիձոր գյուղի շահագրգիռ անձ
22.Ղազարյան Սուրեն- Ագարակի միջնակարգ դպրոցի ուսուցիչ
23. Հովսեփյան Հայկուշ- Ալվանք գյուղի շահագրգիռ անձ
24. Գաբրիելյան Հենրիկ- Տաշտուն գյուղի շահագրգիռ անձ
25.Բոյաջյան Ալիկ- Նոնաձոր գյուղի շահագրգիռ անձ
26. Սարգսյան Մարիամ- Ագարակ քաղաքի շահագրգիռ անձ
27. Գևորգյան Սյուզաննա- Մեղրի քաղաքի շահագրգիռ անձ
28.Ծատրյան Մարիամ- Լեհվազ գյուղի շահագրգիռ անձ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2016 թվական N15 - Ա

«ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 26-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով, մանկապարտեզի տեսակը կանոնադրությանը համապատասխանացնելու նպատակով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.«Ագարակ քաղաքի թիվ 1 մ/մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2.Հաստատել «Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

3.Հաստատել «Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016թ.
հոկտեմբերի 18-ի N15-Ա որոշման

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.<<Ագարակի մանկապարտեզ>>համայքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ: Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի<<Ագարակի մանկապարտեզ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է <<Ագարակ քաղաքի թիվ 1 մ/մ>>համայնքյին ոչ առևտրային կազմակերպության /գրանցման համար 97.210.00327,վկայական թիվ 03Ա074506, գրանցման ամսաթիվ 30.01.2007թ./իրավահաջորդը:
Այն վերանվանվել է <<Ագարակի մանկապարտեզ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 15-Ա որոշմամբ:
2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. Հաստատության գտնվելու վայրն է ՀՀ Սյունիքի մարզ,ք.Ագարակ, Գարեգին Նժդեհ 1:
Հաստատության մասնաճյուղերի գտնվելու վայրը սահմանվում է մասնաճյուղի կանոնադրությամբ:
4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
6. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
7. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
8. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
9. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական

կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
11. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
12. Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը,մայրենի լեզվով հաղորդակցվել և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության,պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը,դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
13.Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
14. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին,երեխաների տարիքային,ֆիզիոլոգիական և սոցիալ–հոգեբանական զարգացման առանձնահատկություններին,հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:
15 Հաստատությունը կարող է զբաղվել հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակներով
ա/լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում,
բ/մարզա-առողջարարական ծառայությունների կազմակերպում,
գ/զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական-շտկողական ծառայությունների կազմակերպում,
դ/երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես վաճառքի կազմակերպում:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:
17.Հաստատություն ընդունվում են մինչև 6 տարեկան երեխաները նախադպրոցական հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում:Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք /խառը/ խմբեր,որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմն գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:
18. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:
19. Հաստատություններն իրենց գործունեության ուղղություններին համապատասխան բաժանվում են հետևյալ տեսակների՝
ա) մանկապարտեզ, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր նապահովում է երեխաների խնամքը.
բ) հատուկ մանկապարտեզ՝ երեխաների ֆիզիկական և հոգեկան զարգացման շեղումների շտկման ծրագրերի գերակայությամբ.
գ)առողջարանայինմանկապարտեզ՝ սանիտարահիգիենիկ, կանխարգելիչ և առողջապահական ծրագրերի գերակայությամբ.
դ) մանկական կենտրոն, որն իրականացնում է միայն նախադպրոցական կրթական ծրագրեր և խորհրդատվական ծառայություններ.
ե)համալիր մանկապարտեզ, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական հաստատությունների մի քանի տեսակներ կամ խմբեր.
զ) կրթահամալիր, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական և այլ մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող մի քանի հաստատություններ.
է) մանկատուն, որն իրականացնում է ծնողազուրկ, ծնողական խնամքից զուրկ, սոցիալապես անապահով, անբարենպաստ ընտանիքների մինչև 6* տարեկան երեխաների խնամքը, դաստիարակությունը և ուսուցումը:
20. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան:Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային ,երեկոյան ժամերին,շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին , ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը

մանկապարտեզ:
21.Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում էհաստիքային բժշկական անձնակազմի միջոցով , որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության ,ֆիզիկական զարգացման ,բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման ,սանիտարահիգիենիկ նորմերի,ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
22.Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմը պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության , որի կազմակերպումը ապահովում է հաստատությունը:
23.Հաստատությունը համայնքի այլ բնակավայրերում կարող է ունենալ առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր: Մասնաճյուղը իրավաբանական անձ չէ և գործում է սույն կանոնադրության համաձայն:Մասնաճյուղի ղեկավարները նշանակվում են հիմնադրի որոշմամբ:Մասնաճյուղերը գործում են հաստատության անունից:Հաստատությունը պատասխանատվություն է կրում մասնաճյուղերի գործունեության համար:

IV.ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

24.Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են,ծնողները/օրինական ներկայացուցիչները/,մանկավարժական աշխատողները:
25.Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին /օրինական ներկայացուցիչներին /ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի , որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:
26.Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:
27.Երեխայի և հաստատության ածխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության , երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
28.Հաստատություն աշխատանքի ընդունվում են այն անձինք ,ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական – մանկավարժական որակավորում:
29.Հաստատության աշխատողների իրավունքները ,սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ,հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
30.Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական , ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

31. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝տնօրեն):

32. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

33. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա)ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը,

բ)հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ)հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ)հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե)հաստատության կառավարման համակարգի սահմանումը,

զ)հաստատությանվերակազմակերպումըևլուծարումը,

է)հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

34. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

35. Համայնքիղեկավարը՝

ա)սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն : Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

36. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության

գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

37.Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ)սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ)նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

դ)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

ե) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

զ)աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

է)բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

թ)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ)իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

38. Տնօրենի բացակայության դեպքում,համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

39.Մեթոդիստը (տնօրենի ուսումնականգծով տեղակալը)՝

ա)իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

բ)ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը.

գ)պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

դ)կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.
ե)ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.
զ)դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին,ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.
է)կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

40.Դաստիարակը՝
ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.
բ)պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.
գ)մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

41.Երաժշտականղեկավարը՝
ա)տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.
բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ.

42. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝
ա) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
գ) հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

43.Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

44. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու , տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

45. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից

հետո մնացած գույքի:

46.Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

47. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

48.Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

49.Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

50.Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

51.Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52.Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

ա)հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ)բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53.Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VII . ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համայնքի ղեկավար Մ.Զաքարյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016թ -ի հոկտեմբերի
18-ի թիվ 15-Ա որոշմամբ

Համայնքի ղեկավար՝
Մ.Ս.Զաքարյան _____

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

<<Ագարակի մանկապարտեզ> ՀՈԱԿ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 46
2.Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափը	Հավելավճար	Ամսական աշխատավարձ	ընդամենը տարեկան աշխ. ֆոնդ.
Վարչական միավորներ					
Տնօրեն	1	122000	0	122000	1464000
Մեթոդիստ ուս. գծ.տն.տեղ.	1	92000	0	92000	1104000
Ընդամենը	**2**		**0**	**214000**	**2568000**
Մանկավարժական դրույքները					
Դաստիարակ	10	97380	0	973800	11685600
Լր.կրթ.ծառ.մանկ.	1	77904	0	77904	934848
Երաժշտ.դաստիարակ	1,5	77904	0	116800	1401600
Ընդամենը	**12,5**			**1168504**	**14022048**
Հաշվապահ	1	85000	0	85000	1020000
Ընդամենը	**1**		**0**	**85000**	**1020000**
Սպասարկող անձնակազմ					
Դաստիարակի օգնական	8,8	77904	0	685556	8226672
Գործավար	1	77904	0	77904	934848
Բուժքույր	1,5	86700	0	130050	1560600
Խոհարար	1	77904	0	77904	934848
Խոհարարի օգնական	1	77904	0	77904	934848
Դերձակ	1	77904	0	77904	934848
Պահակ	2	77904	0	155808	1869696
Լվացքարար	1	77904	0	77904	934848
Տնտեսվար	1	77904	0	77904	934848
Պահեստապետ	1	77904	0	77904	934848
Օժանդակ բանվոր	1	77904	0	77904	934848
Շենք.սարք. սպ. և նոր.բան.	1	77904	0	77904	934848
Հավաքարար	1	77904	0	77904	934848
Այգեպան	1	77904	0	77904	934848
Ընդամենը	**23,3**		**0**	**1828358**	**21940296**
Ընդամենը	**38,8**		**0**	**3295862**	**39550344**

Տնօրեն՝ Ա.Կարապետյան

Հաշվապահ՝ Ա. Մարգարյան

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

ԿԱՐՃԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

1.Աշխատակիցների թվաքանակը՝4
Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափ	Հավելավճար	Ամսական աշխատավարձ	ընդամենը տարեկան աշխ. ֆոնդ.
Մանկավարժական դրույքները					
Դաստիարակ	1,2	97380	0	116856	1402272
Ընդամենը	**1,2**	**97380**	**0**	**116856**	**1402272**
Սպասարկող անձնակազմ					
Խոհարար	1	77904	0	77904	934848
Դաստիարակի օգ.	1,1	77904	0	85694	1028333
Ընդամենը	2,1				
ԸՆԴԱՄԵՆԸ	3,3	235188		280654	3365448

Տնօրեն Ա.Կարապետյան

Հաշվապահ Ա. Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2016 թվական N16 - Ա

«ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 26-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով, մանկապարտեզի տեսակը կանոնադրությանը համապատասխանացնելու նպատակով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.«Մեղրի քաղաքի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2.Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 1-ի:

3.Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 18
ք. Մեղրի

Հավելված 1

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2016թ.
հոկտեմբերի 18-ի N16-Ա որոշման

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Մեղրի քաղաքի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /գրանցման համար 79,210,00362,վկայական թիվ 03Ա081082, գրանցման ամսաթիվ 09,12,2009թ./իրավահաջորդը:
Այն վերանվանվել է .«Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 15-Ա որոշմամբ:
2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. Հաստատության գտնվելու վայրն է ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի, Ադելյան 5:
Հաստատության մասնաճյուղերի գտնվելու վայրը սահմանվում է մասնաճյուղի կանոնադրությամբ:
4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
6. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
7. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
8. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
9. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպու-թյունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
11. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
12. Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը,մայրենի լեզվով հաղորդակցվել և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության,պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը,դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
13.Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
14. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին,երեխաների տարիքային,ֆիզիոլոգիական և սոցիալ–հոգեբանական զարգացման առանձնահատկություններին,հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:
15. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:
17.Հաստատություն ընդունվում են մինչև 6 տարեկան երեխաները նախադպրոցական հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման , վրա ձևավորված խմբերում:Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք /խառը/ խմբեր,որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմն գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:
18. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված

նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:
19. Հաստատություններն իրենց գործունեության ուղղություններին համապատասխան բաժանվում են հետևյալ տեսակների՝
ա) մանկապարտեզ, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր նապահովում է երեխաների խնամքը.
բ) հատուկ մանկապարտեզ՝ երեխաների ֆիզիկական և հոգեկան զարգացման շեղումների շտկման ծրագրերի գերակայությամբ.
գ)առողջարանայինմանկապարտեզ՝ սանիտարահիգիենիկ, կանխարգելիչ և առողջապահական ծրագրերի գերակայությամբ.
դ) մանկական կենտրոն, որն իրականացնում է միայն նախադպրոցական կրթական ծրագրեր և խորհրդատվական ծառայություններ.
ե)համալիր մանկապարտեզ, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական հաստատությունների մի քանի տեսակներ կամ խմբեր.
զ) կրթահամալիր, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական և այլ մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող մի քանի հաստատություններ.
է) մանկատուն, որն իրականացնում է ծնողազուրկ, ծնողական խնամքից զուրկ, սոցիալապես անապահով, անբարենպաստ ընտանիքների մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, դաստիարակությունը և ուսուցումը:
20. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային ,երեկոյան ժամերին,շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին , ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը մանկապարտեզ:
21.Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում էհաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության ,ֆիզիկական զարգացման ,բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի,ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
22.Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմը պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության, որի կազմակերպումը ապահովում է հաստատությունը:
23.Հաստատությունը համայնքի այլ բնակավայրերում կարող է ունենալ առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր: Մասնաճյուղը իրավաբանական անձ չէ և գործում է սույն կանոնադրության հիման համաձայն: Մասնաճյուղի ղեկավարները նշանակվում են հիմնադրի որոշմամբ: Մասնաճյուղերը գործում են հաստատության անունից:Հաստատությունը պատասխանատվություն է կրում մասնաճյուղերի գործունեության համար:

IV.ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

24.Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները /օրինական ներկայացուցիչները/, մանկավարժական

գործում:
29.Հաստատության աշխատողների իրավունքները ,սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
30.Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական , ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

31. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):
32. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
33. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա)ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը,
բ)հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
գ)հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.
դ)հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
ե)հաստատության կառավարման համակարգի սահմանումը,
զ)հաստատության վերակազմակերպումը և լուծարումը,
է)հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաստատումը.
հաշվեկշռի
ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
34. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխա-նատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ

կատարման համար:
35. Համայնքիղեկավարը՝
ա)սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.
գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստա-տությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:
36. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
37.Տնօրենը՝
ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.
բ)սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
գ)նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.
դ)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
ե) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
զ)աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
է)բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.
թ)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
ժ)իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.
ժա) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
ժբ)ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների

հաստատմանը.
ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:
38. Տնօրենի բացակայության դեպքում,համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:
39.Մեթոդիստը (տնօրենի ուսումնականգծով տեղակալը)՝
ա)իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.
բ)ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը.
գ)պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.
դ)կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.
ե)ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.
զ)դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին,ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.
է)կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:
40.Դաստիարակը՝
ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.
բ)պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.
գ)մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:
41.Երաժշտականղեկավարը՝
ա)տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.
բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ.
42. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝
ա) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
գ) հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

43.Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

44. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
45. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:
46.Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
47. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
48.Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:
49.Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
50.Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
51.Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
52.Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.
ա)հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.
բ)բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
գ)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
53.Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VII. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաստատված 2
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու
համայնքի ավագանու
2016թ հոկտեմբերի 18-ի
N 16 Ա որոշման

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

<<Մեղրի համայնքի մանկապարտեզ> ՀՈԱԿ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 45
2.Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափը	Հավելավճար	Ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ ֆոնդ
Վարչական միավորներ					
Տնօրեն	1	122000	0	122000	1464000
Մեթոդիստ ուս. գծ.տն.տեղ.	1	92000	0	92000	1104000
Ընդամենը	2		0	214000	2568000
Մանկավարժական դրույքներ					
Դաստիարակ	10	97380	0	973800	11685600
Լր.կրթ.ծառ.մանկ.	1	77904	0	77904	934848
Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0,75	77904	0	58428	701136
Երաժշտ.դաստիարակ	1,5	77904	0	116856	1402272
Ընդամենը	13,25			1226988	14723856
Հաշվապահ	1	85000	0	85000	1020000
Ընդամենը	1		0	85000	1020000
Սպասարկող անձնակազմ					
Դաստիարակի օգնական	8,8	77904	0	685555,2	8226662,4
Գործավար	1	77904	0	77904	934848
Բուժքույր	1,5	155808	0	233712	2804544
Խոհարար	1	155808	0	155808	1869696
Խոհարարի օգնական	1	77904	0	77904	934848
Դերձակ	1	77904	0	77904	934848
Պահակ	1	77904	0	77904	934848
Լվացքարար	1	77904	0	77904	934848
Տնտեսվար	1	77904	0	77904	934848
Պահեստապետ	1	77904	0	77904	934848
Օժանդակ բանվոր	1	77904	0	77904	934848
Շենք.սարք. սպ. և նոր.բան.	1	77904	0	77904	934848
Հավաքարար	1	77904	0	77904	934848
Այգեպան	1	77904	0	77904	934848
Ընդամենը	22,3			1932019,2	23184230,4
Ընդամենը	38,55		0	3458007,2	41496086,4

Տնօրեն /Սյուզան Մարգսյան/

Հաշվապահ /Սիրանուշ Գրիգորյան

հավելված

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու

համայնքի ավագանու

2016թ հոկտեմբերի 18-ի

N ----- որոշման

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

ԼԵՀՎԱԶԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 7

Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափը	Հավելավճար	Ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ ֆոնդ
Մանկավարժական դրույքներ					
Դաստիարակ	2	97380	0	194760	2337120
Երաժշտ.դաստիարակ	0,5	77904	0	38952	467424
Ընդամենը	2,5			233712	2804544
Սպասարկող անձնակազմ					
Դաստիարակի օգնական	1,5	77904	0	116856	1402272
Բուժքույր	0,5	155808	0	77904	934848
Խոհարար	1	155808	0	155808	1869696
Ընդամենը	3		0	350568	4206816
Ընդամենը	5,5		0	584280	7011360

Տնօրեն /Սյուզան Սարգսյան/

Հաշվապահ /Հասմիկ Գրիգորյան